

իր կուրծքին կը զարնէ ծանր հարուածներով, և մերթ կատաղօրէն իր երկայն մօրուքին մազերը կուզէ խըլել եռանդի, սիրոյ և խղճմտանքի յուսահատ խոյանքով մը, իր կծկուած ատամներովը կը խածնէ Ս. Գերեզմանի շրթունքը, իբր թէ կ'ուզէր անկէ կտոր մը փրցնել... Ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ զարմանք, ի՞նչ երջանկութիւն, կ'ըսէ աւանդութիւնը, Ս. Գերեզմանի քարը կը կակուզնայ, մոմի նման, ան տեղի կուտայ ճնշումին եւ ուխտաւորը մտեռանդ, յափշտակուած, սիրով և ուրախութեամբ արբշիռ, մարդկային գերագոյն ուրախութեամբ կը խլէ Ս. Գերեզմանին մարմարեայ կտորը եւ իր ակուաներուն մէջ կ'առնէ, եւ այս շնորհը կը նկատուի իբր նշան քաջութեան, ապաշխարութեան, վարձատրութեան եւ խոնարհութեան:

Ս. Գերեզմանի մարմարի այս կտորը ոսկիի եւ պտուական քարի մը մէջ ազուցուած՝ երկար ժամանակ Ս. Գերեզմանի եկեղեցիին փառքը եղած է Լօշի (Touraine, France) մօտ Պէոլիս վանքին մէջ (L. S. S. էջ 77-81):

20. — Ս. Գերեզմանի մեջ Երուսաղեմի առաջին խաչակիր քաղաւորին մումը ինքնին կը վառի, իր ընտրութեան ժամանակ (22 Յուլիս 1099). — Բաւական չէ Երուսաղէմ գրաւելը, պէտք է նաև լաւ կազմակերպութիւն մը, ապահովելու համար յաղթութիւնը: Յաղթականները որպէսզի կարենային Երուսաղէմ մընալ, պէտք էր որ գլխաւոր մը ունենային լատին թագաւորութեան կազմակերպութիւնը կատարելու համար: Յաղթականները շատ էին, մէկը պէտք էր ընտրել, այս ընտրութիւնը մտքերը շատ յոգնեցուց եւ